

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 20/1

3 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Հրազդան կենտրոնական մարզադաշտ» ՓԲԸ 10.09.2014 թ-ի թիվ 28 գրությամբ բերված բողոքը ՀՀ ՖՆ ՕՀՎ 08.09.2014 թ-ի թիվ 1004376 ստուգման ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում նյութեր են ստացվել «Հրազդան կենտրոնական մարզադաշտ» ՓԲԸ վերաբերյալ: Նյութերի ուսումնասիրության արդյունքում «Հրազդան կենտրոնական մարզադաշտ» ՓԲԸ կողմից հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով 05.11.2013 թ-ին հարուցվել է թիվ 83178413 քրեական գործը: Այնուհետև, քրեական գործը ուղարկվել է ՀՀ ՖՆ քննչական վարչություն՝ նախաքննություն կատարելու համար: Ներկայումս քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել և քննվում է թիվ 83178413 քրեական գործը, անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Հրազդան կենտրոնական մարզադաշտ» ՓԲԸ բողոքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

«Հրազդան կենտրոնական մարզադաշտ» ՓԲԸ 10.09.2014 թ-ի թիվ 28 գրությամբ բերված բողոքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ